

**ԽԱԶԻԿ ՊՕՂՈՍ ԱՍՏՈՒԱՇԱՏՏԵԱՆ
(ՍԼՐ ՓՈԼ ԶԱԹԸԸ)՝
ՀՈՆԿ ՔՈՆԿԻ ՆԱԻԱՀԱՆԳԻՍԻՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ**

Հոնկ Քոնկի հայութեան ամենէն նշանաւոր, ամենէն մեծահարուստ եւ մշշագային չափանիշով երեւելի առեւտրականն է Խաչիկ Պօղոս Աստուածատրեան, որ արտաքին աշխարհին ծանօթ է Սլր Փոլ Զարըր անունով։ Անոր անունը անմահացած է պատմութեան մէջ՝ իրրեւ Հոնկ Քոնկի նաւահանգիստին հիմնադիրը։

Խաչիկ Պօղոս Աստուածատրեան ծնած է 8 Մեպտեմբեր 1846ին, Հեղիսաստանի Կալկարա քաղաքու, ուր իր ուսումը ստացաւ ծննդավայրին «Լա Մարբինիե» դպրոցին մէջ։ Տակաւին պատանի, գործի ասպարէզ մտնելու հեռանկարով ան 1867ին Հոնկ Քոնկ գաղրեց, ուր «Հիմնուստան» դրամատան մէջ պաշտօնեայ մտաւ։ «Հիմնուստան» այդ ժամանակ մեծ գործառութիւններ ուներ Չինաստանի եւ Ճարմնի մէջ։

Կարճ ժամանակուան ընթացքին որոշ փորձառութիւն ձեռք գցել եւս, ինքնավստահ եւ համարձակ՝ ան իրածարեցաւ պաշտօնեն առեւտրական ասպրէզ նետուեցաւ։

Առեւտրական բնատուր եւ բացառիկ տաղանդով օժտուած այս աղքատ երիսասարդը տարուէ տարի ընդարձակելով գործը մեծահարուստ եւ Հոնկ Քոնկի առեւտրական իշխող դասակարգին ամենէն ազդեցիկ դէմքերէն դարձաւ։ «Հոնկ Քոնկի առեւտրական բագաւորը» տիտղոսին արժանանալով։ Ան սերտ յարաբերութիւն ունէր բրիտանական իշխող դասակարգին հետ

եւ իրրեւ մեծ հեղինակութիւն՝ 1896էն սկսեալ գործադիր խորհուրդի անդամ դարձաւ։ 1897ին ալ Վիմբորիա Թագուհիի յիսնամեայ յորելենական խորհուրդին ատենապետ նշանակուեցաւ։

Խաչիկ Պօղոս Աստուածատրեանի ամենէն մեծ իրագործումը եղաւ Հոնկ Քոնկի նաւահանգիստին կառուցումը։ Արդարեւ, ան ծրագրեց եւ իր դրամով կառուցել սուաւ Հոնկ Քոնկի մեծ նաւահանգիստը։ իր սասնըմէկ մթերաբանոցը ներու։ Ան նաեւ նաւահանգիստին մօտակայ ծովը նուանելու գաղափարը յղացաւ։ Այս ծրագիրը պատմութեան մէջ արձանագրուած է իրրեւ «Դարուս մէջ յղացուած ամենէն ընդարձակ եւ ամենէն հանճարեղ ծրագիրներէն մէկը»։

Անոր օժանդակութեամբ կառուցուեցաւ նաեւ Հոնկ Քոնկի համալսարանը, ինչպէս նաեւ՝ բազմարի շէնքեր։

Իր այս մեծ իրագործումներուն ու բարեբարութիւններուն համար Բրիտանիոյ արքունիքը Սլր պատուակալ տիտղոսը շնորհեց անոր։

Հայկական կեանքէն հեռու ապրելով հանդերձ, ան չխցուեցաւ իր ժողովուրդէն եւ օգնութեան հասաւ հոն, ուր կարիք կար։

Ան 1924ին, Սահակ Արք. Այլատեանի դիմումին վրայ, Ահլքական նեղ կացութենէ փրկեց Կալկարայի Ս. Նազարէր Եկեղեցին, պատկառելի գումար մը նուիրելով անդր։ Այնուհետեւ ան իր

հարսութեան եօթանասունինգ առ հարիւրը կտակեց նոյն եկեղեցոյ, տեսականօրէն պահելով անոր եկամուտներուն զիխաւոր մասը: Ան այլ օժանդակութիւններ եւս կատարեց կալկարայի հայութեան եւ «Լա Մարքինիէր» դպրոցին, որոնց բոլորին գումարը Յ միլիոն ոռուփիի կը հասնի: Սըր Փոլ Չարքը մահացաւ 27 Մայիս 1926ին եւ բաղուեցաւ Հոմիկ Քոնկի գերեզմանատունը: Ան այլ

իր բարերարութեան եւ ներդրումին՝ Հոմիկ Քոնկի մէջ երկու փողոցներ իր անունով կոչուեցան «Աստուատրեան» եւ «Խաչկի»:

Ի յիշատակ մեծ բարերարին՝ Կալկարայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ բակին մէջ 1953ին կառուցուեցաւ արդիական եռայարկ շէմք մը՝ իրրեն ապաստանարան չբաւոր հայ ծերումիններուն:

ՀՐԱՍՈՒ

ԱՆԱՐԱՏ ՄԵՂՐԻՆ ԲՈՒԺԻՉԻՉ ՑԱՏԿՈՒԹԻՒՆԵՐԸ

«Այն տունին, որի սեղամից չի պակասում մեղքը, այնոնց երթեւ ոտք չի գնի բժիշկը»:

ԱՍԱՐ ՍԵՐԱՍՏՈՒԹԻ
«Գիրք Բժշկութեան արթեստի» 16րդ դար

- Անարատ մեղքը կը բուժէ աւելի համ 19 տեսակ հիւանդութիւններ:
- Մեղքը միակ սնումնին է, որ ամենացըրդ կ'անցնի արեան մէջ:
- Անարատ մեղքը երկարակեցութիւն պարզեւող սնումն մըն է: Հաստատուած է, թէ աշխարհի մէջ հարիւր տարեկան եւ վեր ապրուներաւ մեծ տոկոսը կը կազմէն մերուարայնները:
- Անարատ մեղքը ենուոր կը պատէ մարդիկ վարակիչ եւ ուռուցքային հիւանդութիւնների:
- Մեղքը տեսողութեան զօրացուցիչ է, նաև աչքը մաքրող: Մեղուարայնները իր անգամ ակնոց կը գործածեն:
- Աչքի ցաւի ժամանակ փոքր կարի մը գոյ մեղք կարեցնել: Ան կը սնուցանի աչքը եւ կը պայքարի կարճատեսութեան դէմ:
- Մաղիկներէ հաւաքուած մեղքը կը բարելաւ սրտին աշխատանքը:
- Մեղքը որոշ խառնուրդներու ենու կը բուժէ երիկամի եւ մաղապարիի սրբառնումները. կը բափէ տաքըրը, կը կամնաւորէ արեսն շրջանառութիւնը եւ զղայի եւ համակարգը:
- Մեղքը կը դարմանէ լարդի մեծացումը եւ անոր ենու կապուած հիւանդութիւնները:
- Գործուութեանն եւ հիւանդութեանն ելույ անձին կը յանձնարարուի մեղքը, որ կ'սաւելցնէ արեան կարմիր զնիկներուն հանակ:
- Շաքարախոտի պարագային, օրական իր հասնակութեամբ ուտելով անարատ մեղքը, կը պահպանէ շաքարի հանակը արեան մէջ, կ'իւրացուի ամբողջութեամբ, առանց վնասաւոր փամբեասին:
- Որոշ բայսերու խառնուրդով, մեղքը կը բուժէ վերիքը, այրուածքները, բաւրքը, դէմքի ցաւերը եւ բորբ:
- Անարատ մեղքը կը բուժէ սուամուսի, աղիքի խոցերը, ինչպէս նաև կաստրիսի պարագաները: